ՀԱՅ - ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ՄԱՐԹԱ ԷԴՈՒԱՐԴԻ

ԵՐԵԽԱՅԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԽՆԱՄՔԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ՈՉ ՊԱՏՇԱՃ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՔՐԵԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԺԲ.00.05 - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ

Իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2025

РОССИЙСКО-АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ

МЕЛИКСЕТЯН МАРТА ЭДУАРДОВНА

УГОЛОВНО-ПРАВОВЫЕ И КРИМИНОЛОГИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ НЕИСПОЛНЕНИЯ ИЛИ НЕНАДЛЕЖАЩЕГО ИСПОЛНЕНИЯ ОБЯЗАННОСТИ ПО ВОСПИТАНИЮ ИЛИ УХОДУ ЗА РЕБЕНКОМ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.05 - «Уголовное право и криминология, уголовно-исполнительное право»

ЕРЕВАН – 2025

Ատենախոսության թեման հաստատվել է Հայ-Ռուսական համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր իրավաբան **Ս.Ս. Ավետիսյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր իրավաբան **Ա.Ա. Թամազյան**
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ **Ա.Պ. Ղուկասյան**

Առաջատար կազմակերպություն՝ **ՀՀ ՆԳՆ կրթահամալիր**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2025 թվականի հունիսի 4-ին՝ ժամը 15:00-ին, Հայ-Ռուսական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի Իրավագիտության 063 մասնագիտական խորհրդի նիստում (0051, ք. Երևան, Հովսեփ Էմինի 123):
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-Ռուսական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:
Սեղմագիրն առաքված է 2025 թվականի ապրիլի 23-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, **իրավաբանական գիտությունների թեկնածու Ջ.Հ. Հայրապետյան**

Тема диссертации утверждена в Российско-Армянском университете

Научный руководитель: доктор юридических наук, профессор, заслуженный юрист РА **С.С. Аветисян**

Официальные оппоненты: доктор юридических наук, профессор, заслуженный юрист РА **А.А. Тамазян**
кандидат юридических наук, доцент **А.П. Гукасян**

Ведущая организация: **Образовательный комплекс МВД РА**

Защита состоится 4-ого июня 2025 года в 15:00 часов на заседании специализированного совета 063 по Юриспруденции КВОН РА при Российско-Армянском университете (0051, г. Ереван, ул. Овсепа Эмина 123).
С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки Российско-Армянского университета.
Автореферат разослан 23-ого апреля 2025 года.

Ученый секретарь специализированого совета, **кандидат юридических наук Дж.А. Айрапетян**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացման համար անհրաժեշտ նախապայմանների ստեղծումը պետության առջև դրված հիմնախնդիրներից է, քանի որ ընտանիքում ապրելը և պատշաճ դաստիարակություն և խնամք ստանալը կարևոր երաշխիք է երեխայի մյուս իրավունքների իրացման և երեխայի զարգացման համար:

Անդրադառնալով ընտանիքի և երեխայի շահերի կենսագործման կարևորագույն երաշխիքներից մեկին՝ դրանց քրեաիրավական պաշտպանությանը, հարկ է նշել, որ աշխարհի բազմաթիվ պետությունների քրեական օրենսգրքերում առկա են կոնկրետ քրեաիրավական նորմեր, որոնք միտված են այդ շահերի պաշտպանությանը:

2021թ. մայիսի 5-ին ընդունված նոր ՀՀ քրեական օրենսգրքի 247-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է սահմանում երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար: Այդ արարքի համար պատասխանատվություն նախատեսված էր նաև նախկին ՀՀ քրեական օրենսգրքի 170-րդ հոդվածով:

Մինչդեռ, առ այսօր Հայաստանի Հանրապետությունում՝ թե՛ նախկին ՀՀ քրեական օրենսգրքի 170-րդ հոդվածով, թե՛ գործող քրեական օրենսգրքի 247-րդ հոդվածով որևէ մեղադրական դատավճիռ չի գրանցվել: Ուսումնասիրելով ՀՀ քրեական օրենսգրքի 247-րդ հոդվածով նախատեսված դետերմինանտները, ինչպես նաև դրա բացահայտմանը, հայտնաբերմանն ու կանխարգելմանն ուղղված օրենքով նախատեսված ներկայիս մեխանիզմները, պետք է արձանագրել, որ դրանք թերի են և կատարելագործման ենթակա, մասնավորապես՝ բացակայում են միջգերատեսչական համագործակցության հստակ կառուցակարգերը, իսկ իրականացվող գործընթացներն արդյունավետ չեն:

Առկա վիճակագրությունը մտահոգիչ է այն պատճառաբանությամբ, որ այն իրականում չի արտացոլում Հայաստանի Հանրապետությունում քննարկվող հանցակազմի իրական վիճակագրությունը, ինչպես նաև անհրաժեշտ է արձանագրել, որ վերջին տարիների ընթացքում անչափահասների նկատմամբ կատարված հանցանքների թիվն երկու անգամ աճել է:

Թեմայի գիտական մշակվածության աստիճանը: Երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հիմնախնդիրներն ուսումնասիրվել են մի շարք գիտնականների կողմից (Ա.Ս. Ղամբարյան, Դ.Ա. Թումասյան, Ն.Ի. Վետրովա, Ա.Ե. Վոլկովա և այլք): Բարձր գնահատելով նշված և այլոք հեղինակների աշխատանքները, պետք է սակայն արձանագրել, որ նախկինում կատարված ուսումնասիրությունների շրջանակներում մշակված գիտական դրույթները բավարար չեն, ինչը ՀՀ նոր օրենսդրության պայմաններում համապատասխան բարդություններ է առաջացնում իրավակիրառ մարմինների աշխատանքային գործունեությունում, ինչն էլ չի նպաստում քննարկվող խմբի հանցագործությունների դեմ լիարժեք պայքարի, դրա կանխարգելման միջոցների արդյունավետությանը:

Սույն աշխատանքում փորձ է արվել լրացնել առկա օրենսդրական բացերը, վերհանել քննարկվող հանցակազմի առանձնահատկությունները, ներկայացնել օրենսդրության փոփոխություններ ու լրացումներ:

Հետազոտության օբյեկտը և առարկան: *Ատենախոսության օբյեկտ են* հանդիսանում այն հասարակական հարաբերությունները, որոնք ծագում են երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հանցակազմի կապակցությամբ, քննարկվող հանցակազմի քրեաիրավական գնահատականի առանձնահատկությունները, տվյալ հանցանքի կատարմանը նպաստող հիմնական սոցիալ-հոգեբանական և այլ գործոնները, նշված հանցագործության դեմ պայքարի և կանխարգելման քրեաիրավական բնույթի հիմնական ուղղությունները:

Ատենախոսության առարկան են կազմում երեխաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը ապահովող օրենսդրության նորմերը, մասնավորապես՝ դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում, նշված նորմի կիրառելիությունը գործնականում, նշված ոլորտում գործառույթներ իրականացնող պետական մարմինների աշխատանքային գործունեությունը, ինչպես նաև ատենախոսության թեմայի վերաբերյալ գիտական հրապարակումները:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: *Ատենախոսության նպատակն է* երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու քրեաիրավական և քրեաբանական ուսումնասիրությունն ու վերլուծությունը և տվյալ հանցատեսակի դեմ արդյունավետ պայքարի և կանխարգելման միջոցների մշակումը քրեաիրական և քրեաբանական ասպեկտների համակարգային հետազոտության հիման վրա:

Ատենախոսության նպատակով պայմանավորված՝ սահմանվել են հետևյալ գիտագործնական խնդիրները.

1. Երեխայի նորմալ ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական զարգացման առանձնահատկությունների վերլուծությունը՝ որպես քրեաիրավական պաշտպանության օբյեկտ,
2. ՀՀ քրեական օրենսգրքի 247-րդ հոդվածով նախատեսված հանցագործության օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշների քրեաիրավական ուսումնասիրությունը և վերլուծությունը,
3. Կատարված ուսումնասիրությունների հիման վրա երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու վերաբերյալ քրեաիրավական նորմի կիրառման պրակտիկայի կատարելագործմանն ուղղված առաջարկությունների մշակումը,
4. Երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար քրեական պատասխանատվության առանձնահատկությունների ուսումնասիրությունն արտասահմանյան երկրներում,
5. Երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելուն նպաստող դետերմինանտների ուսումնասիրությունը,
6. Երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու կանխարգելման միջոցների ուսումնասիրությունն ու դրա հիման վրա կատարելագործմանն ուղղված միջոցների սահմանումը:

Հետազոտության **մեթոդաբանական հիմքն են** կազմում համընդհանուր՝ դիալեկտիկական համակարգային մոտեցումը: Սույն աշխատանքի ընթացքում կիրառվել են

նաև հետազոտության պատմա-իրավական, համեմատական-իրավական և համա-կարգային-կառուցվածքային և այլ մասնավոր մեթոդները:

Հետազոտության **նորմատիվ հիմքն** են կազմում ՀՀ Սահմանադրությունը, քրեական, քրեադատավարական և ընտանեկան օրենսդրությունը, «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության» ՀՀ օրենքը, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը, «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը, «Երեխայի իրավունքների և երեխայի պաշտպանության համակարգի մասին» ՀՀ օրենքի նախագիծը[1], ՀՀ կառավարության մի շարք որոշումներ և մի շարք այլ նորմատիվ-իրավական ակտեր, միջազգային իրավական ակտեր, որոնք կանոնակարգում են անչափահասների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն առնչվող հասարակական հարաբերությունները:

Ատենախոսության էմպիրիկ հիմքն են կազմել Հայաստանի Հանրապետությունում 2019-2024թթ. ընթացքում քննարկվող հանցակազմի հատկանիշներով քրեական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ ՀՀ ՆԳՆ ոստիկանության ինֆոր-մացիոն կենտրոնի և ՀՀ քննչական կոմիտեի վիճակագրական տվյալները, ինչպես նաև հեղինակի (հեղինակը 2005 թվականից ծառայում է ՀՀ ՆԳՆ ոստիկանությունում, 25.01.2018թ.-ից առ այսօր զբաղեցրել է ՀՀ ՆԳՆ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Մալաթիայի բաժնի անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքի պետի, իսկ 2024 թվականի նոյեմբեր ամսից՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային գլխավոր վարչության Մալաթիայի բաժնի հատկապես կարևորագույն հանձնարարությունների ավագ համայնքային ոստիկանի պաշտոնը) կողմից իր մասնագիտական գործունեության ընթացքում կատարված աշխատանքները:

Հետազոտության գիտական նորույթը: *Հետազոտության գիտական նորույթը* սահմանում են երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետ կապված՝ երեխաների հանցավոր ոտնձգություններից պաշտպանության վերաբերյալ խնդիրների համապարփակ ուսումնասիրությունը, հայրենական իրավաբանական գրականությունում ՀՀ քրեական օրենսգրքի 247-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի քրեաիրավական և քրեաբանական բազմակողմանի վերլուծության առաջին փորձը:

Ընտանիքում անչափահասների իրավունքների և օրինական շահերի պաշտպա-նությունն ապահովող քրեական օրենքի կիրառման վերլուծությունը, մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 247-րդ հոդվածով որակման և կանխարգելման առանձ-նահատկությունների ուսումնասիրությունների շրջանակներում հեղինակը բացահայտել է գործող օրենսդրության բացթողումներն ու թերությունները և հիշյալ նորմի կիրառման կատարելագործմանն ուղղված համապատասխան օրեսդրական առաջարկություններ և միջգերատեսչական համագործակցության մեխանիզմներ մշակել:

Գիտական նորույթ են պարունակում նաև պաշտպանության ներկայացված դրույթները՝

1. Հաշվի առնելով, որ «դաստիարակության» և «խնամք» հասկացությունների սահմանումներն առ այսօր չունեն օրենսդրական ամրագրում, ուստի կարևորվում է

[1] https://www.e-draft.am/projects/4936/about (վերջին անգամ դիտվել է 07.10.2024թ.-ին)

այդ հասկացությունների մեկնաբանումը, առավելևս, որ դրանք հաճախ նույնա-կանացվում են: Առաջարկվում է ՀՀ ընտանեկան օրենսգրքի 41-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանել «դաստիարակություն» և «խնամք» եզրույթները: Մասնավորապես՝

- *«դաստիարակությունը»*՝ սոցիալապես ընդունելի ինքնուրույն և ինքնաբավ կյանքի նախապատրաստում, որը ներառում է առողջության, ֆիզիկական, հոգեկան, հոգևոր և բարոյական զարգացման, կրթության իրավունքի ապահովումը:
- *«խնամքը»*՝ երեխայի առաջնային կարիքների բավարարում, այդ թվում՝ երեխայի կեցությանն անհրաժեշտ նվազագույն պայմանների ապահովումը սննդով, հագուստով, հանգստի և ժամանցի կազմակերպումը, նախադպրոցական ուսումնական գործընթացի կազմակերպումը:

2. Առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգրքի 247-րդ հոդվածը համալրել այնպիսի որակյալ հատկանիշներով, ինչպիսին է անօգնական վիճակում գտնվողի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը:

3. Առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասում առկա «երեխայի առողջության վատթարացումը» եզրույթը փոխարինել «որն առաջացրել է երեխայի առողջությանը թեթև վնասի պատճառում» ձևակերպմամբ,

4. Առաջարկում է երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու սուբյեկտների ցանկը ընդլայնել, ամրագրելով փաստացի դաստիարակողին և խնամքը ժամանակավորապես իրականացնող հարազատներին որպես քննարկվող հանցակազմի սուբյեկտ:

5. Առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգրքի 247-րդ հոդվածը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

1. Ծնողի, այլ օրինական ներկայացուցչի կամ այն անձի կողմից, ում վրա օրենքով սահմանված կարգով դրված է երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը, կամ փաստացի խնամք և դաստիարակություն իրականացնող անձի կողմից այդ պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որն առաջացրել է երեխայի առողջության թեթև վնասի պատճառում՝

2. Նույն արարքը, որը

1) կատարվել է անօգնական վիճակում գտնվողի նկատմամբ,

2) զուգորդվել է երեխայի նկատմամբ դաժան վերաբերմունքով:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասերով նախատեսված հանցանքները, որոնք

1) անզգուշությամբ առաջացրել է երեխայի մահ կամ առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնասի պատճառում, կամ հանգեցրել է այլ ծանր հետևանքի առաջացման,

……:

4. Սույն հոդվածի իմաստով՝ անօգնական վիճակում գտնվող է համարվում հանցավորին դիմադրություն ցույց տալու կամ իր նկատմամբ կատարվող արարքի բնույթը գիտակցելու հնարավորությունից զրկված անձը կամ 12 տարին չլրացած անձը:

6. Քննարկվող հանցագործության հայտնաբերման և կանխարգելման միջոցների տարբեր համակարգերի և անձնական աշխատանքային գործունեության վերլուծության

հիման վրա, առաջարկվում են միջգերատեսչական համագործակցության տարբեր և, հեղինակի կարծիքով, արդյունավետ մեխանիզմների մշակում, մասնավորապես՝

- ՀՀ ընտանեկան օրենսգրքի 58-րդ հոդվածում և «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան ու կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածում կատարել փոփոխություններ, անհետաձգելի դեպքերում ոստիկանության ծառայողների համար երեխային ծնողներից (նրանցից մեկից) կամ այն անձանցից, որոնց խնամքին է հանձնված երեխան, վերցնելու լիազորություն նախատեսելով:

Այն է՝ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 58-րդ հոդվածը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝

1. *Երեխայի կյանքը կամ առողջությունը վտանգող անմիջական սպառնալիքի դեպքում խնամակալության և հոգաբարձության մարմինը կամ ոստիկանության մասնագիտացված ստորաբաժանման ծառայողները իրավասու են անմիջապես երեխային վերցնելու ծնողներից (նրանցից մեկից) կամ այն անձանցից, որոնց խնամքին է հանձնված երեխան:*
2. *Երեխային վերցնելիս, ոստիկանության ծառայողը պարտավոր է անհապաղ հեռախոսակապի միջոցով իրազեկել խնամակալության և հոգաբարձության մարմնին և ապահովել երեխայի ժամանակավոր տեղավորումը:*
3. *Երեխային վերցնելիս խնամակալության և հոգաբարձության մարմինը պարտավոր է անհապաղ ապահովել երեխայի ժամանակավոր տեղավորումը և յոթ օրվա ժամկետում դիմել դատարան՝ ծնողներին (նրանցից մեկին) ծնողական իրավունքներից զրկելու կամ նրանց ծնողական իրավունքները սահմանափակելու հայցով:*

Իսկ «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան ու կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«5. Եթե անմիջականորեն սպառնացող վտանգի տակ գտնվողն անչափահաս կամ անգործունակ անձ է, ապա որոշումը կայացրած ոստիկանության իրավասու ծառայողը պարտավոր է ձեռնարկել ընտանիքում բռնության ենթարկված անչափահասի անվտանգության ապահովմանն ուղղված միջոցներ, այդ թվում՝ անմիջապես երեխային վերցնելու ծնողներից (նրանցից մեկից) կամ այն անձանցից, որոնց խնամքին է հանձնված երեխան և անհապաղ, բայց ոչ ուշ քան 24 ժամվա ընթացքում, իրազեկել խնամակալության և հոգաբարձության մարմնին, կազմակերպել երեխայի ուղղորդումը երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն, որից հետո, գնահատելով իրավիճակը, ԽՀՀ ձեռնարկում է օրենքով և իր կանոնադրությամբ նախատեսված գործողություններ»:

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածում լրացում կատարել, սահմանելով մանկավարժի պարտականությունը ծնողի կամ այլ օրինական ներկայացուցչի կողմից երեխայի կրթություն ստանալու իրավունքի իրացման խոչընդոտելու դեպքում, գրավոր իրազեկել դպրոցի ղեկավարությանը, որն էլ իր հերթին պարտավոր է ստացված տեղեկատվությունը փոխանցել ԽՀՀ և տարածքային ոստիկանության բաժին:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսությունում մշակված դրույթները, եզրահանգումները, արդյունքներն ու առաջարկութ-

յունները կարող են կիրառվել ոչ միայն ոլորտը կարգավորող օրենսդրության կատարելագործման օրինաստեղծ և երեխաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն իրականացնող օրենսդրական ակտերի նախագծերի մշակման գործունեությունում, այլ նաև հանցավորության դեմ պայքարի արդյունավետ կանխարգելման միջոցներն ու միջգերատեսչական համագործակցության մեխանիզմ-ները մշակելիս: Կատարված հետազոտությունը կարող է օգտագործվել ուսումնական պրոցեսում, իրավակիրառ մարմինների ներկայացուցիչների վերապատրաստման ընթացքում:

Կատարված *եզրահանգումներն ու առաջարկությունները* կարևոր նշանակություն ունեն նաև իրավակիրառ մարմինների գործունեության արդյունավետության բարձրացման համար, խոսքը մեծապես վերաբերվում է ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության բաժինների և տեղական ինքնակառավարման մարմինների համատեղ աշխատանքին, որն ուղղված է երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերի հայտնաբերմանը, բացահայտմանն ու օբյեկտիվ կանխարգելմանը:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսության աշխատանքն իրականացվել է Հայ-ռուսական համալսարանի քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնում, որտեղ կազմակերպվել է նաև նախնական քննարկումը և գրախոսումը: Հետազոտության եզրակացություններն ու առաջարկությունները փորձարկվել են հեղինակի ելույթներում բարձրագույն ուսումնական հաստատություններում և գիտական կոնֆերանսներում անցկացվող գիտաժողովներում: Հեղինակի կողմից կատարված հետազոտության արդյունքները, եզրահանգումները արտացոլված են թվով յոթ հրապարակումներում:

Ատենախոսության կառուցվածքն ու ծավալը սահմանվում են հետազոտության նպատակներով և խնդիրներով: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, յոթ պարագրաֆներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության առաջին գլուխը՝ «**Երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հանցակազմի քրեաիրավական բնութագիրը**», բաղկացած է երեք ենթագլուխներից:

Առանջին ենթագլխում ներկայացվում է երեխայի նորմալ ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական զարգացումը որպես քրեաիրավական պաշտպանության օբյեկտ, մասնավորապես՝ ընտանիքի և անչափահասների դեմ ուղղված հանցագործությունների օրենսդրական կարգավորումների մասին իրավունքի պատմությունը, դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու սոցիալական բնույթը, քրեականացման հիմքերը և երեխայի իրավունքների՝ որպես մարդու իրավունքների, պաշտպանությանը նվիրված մի շարք միջազգային իրավական փաստաթղթերի ուսումնասիրությունը:

Երկրորդ ենթագլխում ուսումնասիրվել են երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հանցակազմի օբյեկտիվ տարրերը և ներկայացվել դրանց հատկանիշների սահմանման

հիմնախնդիրները: Հեղինակը նշում է, որ քրեական իրավունքում չկա միասնական մոտեցում ՀՀ քրեական օրենսգրքի 247-րդ հոդվածով նախատեսված հանցագործության օբյեկտի վերաբերյալ: Վերլուծելով ՀՀ քրեական օրենսգրքի 247-րդ հոդվածով նախատեսված հանցագործության տեսակային օբյեկտը, առանձնացվել են դրա ընկալման տարաբնույթ տեսակետները՝ տարբեր հեղինակների մոտեցումները, որոնց վերլուծության հիման վրա հեղինակը կատարել է որոշակի եզրահանգումներ, մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 247-րդ հոդվածով նախատեսված հանցագործության տեսակային օբյեկտ են հանդիսանում այն հասարակական հարաբերությունները, որոնք ապահովում են երեխայի անձի նորմալ զարգացման ինչպես նյութական, այնպես էլ ոչ նյութական պայմանները, ինչպես նաև երեխաների նորմալ կենսագոյատևումը: Հեղինակի կարծիքով, քննարկվող հանցագործության անմիջական օբյեկտ են հանդիսանում երեխայի նորմալ ֆիզիկական, հոգեբանական զարգացումն ու խնամքն ապահովող իրավունքներն ու ազատությունները: Այնուհանդերձ, երեխային դաստիարակելու կամ խնամելու պատրականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը բազմաօբյեկտ հանցագործություն է, որը բաղկացած է հիմնական և լրացուցիչ օբյեկտներից: ՀՀ քրեական օրենսգրքի 247-րդ հոդվածի պարագայում որպես այդպիսին հանդես են գալիս երեխայի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունը, իսկ որպես լրացուցիչ օբյեկտ՝ երեխայի առողջությունը: Հեղինակը նշում է, որ անչափահասը հատուկ կամ արտոնյալ տուժող է, պայմանավորված տարիքային սոցիալ-բիոլոգիական առանձնահատկություններով, հավելելով, որ հատկապես ուշադրության են արժանի այն արարքները, որոնք ուղղված են անօգնական վիճակում գտնվող երեխաների դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելուն կամ ոչ պատշաճ կատարելուն: Դրանց թվին պատկանում են այն անձիք, ովքեր ունեն հոգեկան տկարամտություն կամ հոգեկան խանգարումներ, ինչի արդյունքում վերջիններս օբյեկտիվորեն զրկված են ճիշտ ընկալելու իրենց հետ կատարվածը: Այս հանգամանքները նպատակահարմար ենք գտնում ևս հաշվի առնել որպես տվյալ հանցակազմի որակյալ հատկանիշ: Առաջարկելով քննարկվող քրեաիրավական նորմի շրջանակներում որպես որակյալ հատկանիշ սահմանել անօգնական վիճակը, պետք է հասկանալ երեխայի առողջական սահմանափակ՝ թե ֆիզիկական, և թե հոգեկան կարողությունների առկայությունը: Ընդ որում՝ հանցավորի համար նշված հանգամանքը պետք է ակնհայտ լինի, ինչը նշանակում է վերջինիս իրազեկվածությունն այդ հանգամանքին: Որպես անօգնական վիճակ պետք է դիտարկել յուրաքանչյուր իրավիճակ, որի պարագայում ենթադրյալ բռնության ենթարկված երեխան զրկված է իր իրավաչափ շահերն ինքնուրույն պաշտպանելու հնարավորությունից: Հեղինակը երկրորդ ենթագլխում ուսումնասիրում է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 247-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի օբյեկտիվ հատկանիշները, շեշտադրելով «դաստիարակություն» և «խնամք» եզրույթների մեկնաբանությունն ու դրանց ինստիտուցիոնալ ամրագրումը: Հեղինակն ադրադարձ է կատարում, նաև ՀՀ քրեկան օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասոի դիսպոզիցիայով նախատեսված հետևանքին՝ երեխայի առողջության վատթարացմանը, նշելով, որ այն գնահատողական կատեգորիա է, որը պարզելու համար անհրաժեշտ է դատաբժշկական կամ դատահոգեբանական (երբեմն համալիր դատահոգեբանա-հոգեբուժական) փորձաքննությունների իրականացումը՝

երեխայի առողջության վատթարացման աստիճանը, տեսակը, պատճառները և այլ էական հանգամանքները պարզելու նպատակով:[2]

Կատարված վերլուծություններն ամփոփելով՝ հեղինակն արձանագրում է, որ երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունների ոչ պատշաճ կատարումը խառը անգործություն է, որն արտահայտվում է դաստիարակության կամ խնամքի գործընթացի մասնակի չկատարմամբ, ինչպես նաև երեխայի դաստիարակության կամ խնամքի օրենքով արգելված մեթոդների և եղանակների կիրառմամբ:

Երրորդ ենթագլխում ներկայացվել է երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հանցակազմի սուբյեկտիվ տարրերի բնութագիրը: Մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 247-րդ հոդվածով նախատեսված հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է ուղղակի կամ անուղղակի դիտավորությամբ: Հեղինակը, ուսումնասիրելով երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու սուբյեկտիվ կողմի վերաբերյալ տարբեր հեղինակների դատողությունները, նշում է, որ հեղինակների մեծամասնության կարծիքով այն կատարվում է ուղղակի դիտավորությամբ:[3] Այնուհանդերձ, երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելու հանցակազմը նյութական է, նման պայմաններում հաշվի առնելով, որ օրենքը հանցագործության ավարտը կապում է վտանգավոր հետևանքների առաջացման հետ, ապա հանցանքը համարվում է ուղղակի դիտավորությամբ կատարված, եթե այդ հետևանքների առաջացումն անձի նպատակն է եղել կամ նպատակին հասնելու միջոց, կամ նա նախատեսել է դրանց առաջացման անխուսափելիությունը: Եթե օրենքը հանցագործության ավարտը կապում է վտանգավոր հետևանքների առաջացման հետ, ապա հանցանքը համարվում է անուղղակի դիտավորությամբ կատարված, եթե այդ հետևանքների առաջացումն անձի նպատակը չի եղել, սակայն նա նախատեսել է դրանց առաջացման իրական հնարավորությունը, և նրա համար միևնույն է եղել՝ դրանք կառաջանան, թե ոչ: Հեղինակն, արձանագրելով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 247-րդ հոդվածով նախատեսված հանցագործության սուբյեկտը՝ հատուկ է, մասնավորապես՝ ծնողը (խորթ ծնող, որդեգրող, խնամատար ծնող) կամ այլ օրինական ներկայացուցիչը, ում վրա դրված է երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը կամ անձը, ում վրա դրված է երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը, առաջարկում է երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու սուբյեկտների ցանկը ընդլայնել, ամրագրելով փաստացի դաստիարակողին որպես քննարկվող հանցակազմի սուբյեկտ:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ **«Երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու վերաբերյալ հանցակազմի կիրառման պրակտիկայի կատաելագործման, ինչպես նաև դրա համար նախատեսված պատասխանատվության կանոնակարգման հիմնախնդիրները»,** բաղկացած երկու ենթագլուխներից: Երկրորդ գլխի առաջին ենթագլխում քննարկվել է **երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու վերաբերյալ հանցակազմի կիրառման պրակտիկայի կատարելագործումը:** Հեղինակի կողմից իրականացվել է ՀՀ քրեական օրենսգրքի 247-րդ հոդվածով նախատեսված հանցագործության սահմանազատումը ՀՀ

[2] Տես՝ ՀՀ քրեական իրավունք, Գ.Գրիգորյան, Դ.Թումասյան, Ընդհանուր մաս, Երևան 2022. էջ 392

[3] Տես՝Уголовное право. Общая часть: учебник / отв. ред. И.Я. Козаченко. 4-е изд., перераб. и доп. М., 2008. էջ 269:

քրեական օրենսգրքի 196-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 6-րդ կետերով, 240-րդ հոդվածի 2-րդ մասով, 248-րդ հոդվածով նախատեսված հանցակազմերից: ՀՀ քրեական օրենսգրքի 247-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի կիրառելիությունն ապահովելու նպատակով ուսումնասիրվել է նաև՝ ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 178-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման առամձնահատկությունները, մասնավորապես՝ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում ծնողի, այլ օրինական ներկայացուցչի կամ այլ անձի կողմից, որի վրա երեխայի դաստիարակության, ուսուցման կամ խնամքի պարտականություն է դրված, այդ պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, ինչպես նաև անչափահասների կողմից թմրամիջոցներ օգտագործելու առանց բժշկի նշանակման կամ նրանց կողմից այլ իրավախախտումներ կատարելու համար, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի, «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» ՀՀ օրենքի մի շարք դրույթներ:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում ներկայացվել է **երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար արտասահմանյան երկրներում նախատեսված քրեական պատասխանատվության կանոնակարգումը:** Կատարված ուսումնասիրությունների հիման վրա արտասահմանյան երկրների քրեական օրենսդրությունը պայմանականորեն ուսումնասիրվել է չորս խմբի բաշխմամբ. առաջին խումբն են կազմում Շվեյցարիայի, Ֆրանսիայի և Գերմանիայի քրեական օրենսգրքերը, որոնցում առկա են երեխային դաստիարակելու պարտականությունը չկատարելու կամ երեխայի նկատմամբ դաժան վերաբերմունքի համար քրեական պատասխանատվություն նախատեսող նորմերը: Երկրորդ խմբում ընդգրկված են Լեհաստանի և Դանիայի քրեական օրենսդրությունները, որոնցում առկա են երեխաների նկատմամբ դաժան վերաբերմունքի համար քրեական պատասխանատվություն նախատեսող նորմերը: Երրորդ խումբն են կազմում Բուլղարիայի և Իսպանիայի քրեական օրենսդրությունները այն հիմնավորմամբ, որ այդ երկրների քրեական օրենսգրերը քրեորեն պատժելի են համարում երեխային դաստիարակելու պարտականությունը չկատարելը առանց դաժան վերաբերմունքի զուգորդման: Նորվեգիայի քրեական օրենսգիրքը դասվում է չորրորդ խմբին, որում անչափահասին դաստիարակելու պարտականությունը չկատարելու եղանակներից մեկը դաժան վերաբերմունքն է: Վերլուծության են ենթարկվել նաև Անկախ Պետությունների Համագործակցության որոշ երկրների՝ ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործություններին առանձնահատկությունները, նշելով, որ ԱՊՀ երկրների քրեական օրենսգրքերում քննարկվող հանցագործության օբյեկտիվ կողմը գրեթե նույնական է հայրենական օրենդրության համանման նորմին:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ **«Երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու քրեաբանական վերլուծությունն ու կանխարգելման միջոցները»** բաղկացած է երկու ենթագլխից, որոնցից առաջինում ուսումնասիրվել են երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելուն նպաստող պատճառներն ու պայմանները: Կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա հեղինակն առանձնացնում է երեխայի նկատմամբ կատարված

հանցագործության դեպքերը, ըստ դրանց պատճառների և նպաստող պայմանների, չորս խմբի՝

- Առաջին խմբի պատճառներն ու պայմանները կրում են սոցիալ-տնտեսական բնույթ:
- Երկրորդ խմբի պատճառներն ու պայմաններն ամուսնալուծության փուլում գտնվող ամուսինների տարաձայնություններն են՝ կապված դատարանների գերծան-րաբեռնվածության արդյունքում տարիներով ձգվող դատաքննության հետ, ինպես նաև այդ ընթացքում՝ երեխաների խնամքի, դաստիարակության և տեսակցության կարգի չլուծված հարցերի հետ:
- Երրորդ խմբի պատճառներն ու պայմաններն առանց ծնողական խնամքի մնացած, բռնության ենթարկված երեխաների դաստիարակությամբ և խնամքով զբաղվող հաստատությունների աշխատակիցների կողմից գործառութային պարտականություն-ների ոչ բարեխիղճ կատարումը կամ դրանց չկատարելն է:
- Չորրորդ խմբի պատճառներն ու պայմաններն ընտանիքի անդամներից մեկի հոգեկան խանգարումներն են, թմրամոլությունը, ալկոհոլամոլությունն ու թմրամո-լությունը, ինչպես նաև այլ կախվածությունները:

Հետազոտության երրորդ գլխի երկրորդ ենթագլխում մշակվել են **երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու կանխարգելման միջոցները և դրանց կատարելագործման մեխանիզմները:** Հեղինակը նշում է, որ անհրաժեշտ է ոչ միայն պետության և հասարակության ուշադրությունը հրավիրել անչափահասների խնդիրներին, այլև մշակել գործուն մեխանիզմներ ուղղված նրանց նորմալ ֆիզիկական և հոգեկան զարգացման ապահովմանը, ներընտանեկան հարաբերությունների արժեվորմանը: Այս խնդիրների լուծումը, առաջին հերթին, հնարավոր է օրենսդրական համապատասխան կարգա-վորումների միջոցով: Դիտարկելով երեխայի դաստիարակության կամ խմամքի պարտականությունը չկատարելը կամ ոչ պաշաճ կատարելն որպես ընտանեկան և կենցաղային բռնության տեսակ՝ անտեսում, ուսումնասիրվել են ՀՀ Ընտանեկան օրենսգրքի, «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ Կառավարության 04.04.2024թ-ի թիվ 479-Ն և ՀՀ Կառավարության 01.06.2023թ-ի թիվ 893-Ն որոշումների շրջանակներում անչափահաս տուժածների պաշտպանությանն նվիրված դրույթները և համապատասխան առաջարկություններ մշակել, դրանց կատարելագործման ուղությամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Օրենսդրական մակարդակով ամրագրված է այն սկզբունքը, համաձայն որի, ծնողական իրավունքները չեն կարող իրականացվել երեխաների շահերին հակառակ: Հետևապես, երեխաների շահերի ապահովումը պետք է լինի ծնողների հիմնական հոգածության առարկան: Ծնողական իրավունքներն իրականացնելիս նրանք իրավունք չունեն վնաս պատճառելու երեխաների ֆիզիկական և հոգեկան առողջությանը, նրանց բարոյական զարգացմանը: Երեխաների դաստիարակության եղանակները պետք է բացառեն նրանց նկատմամբ քամահրական, դաժան, կոպիտ, մարդկային արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքը, վիրավորանքը կամ շահագործումը:
2. ՀՀ քրեական օրենսգրքի 247-րդ հոդվածով նախատեսված հանցագործության տեսակային օբյեկտ են այն հասարակական հարաբերությունները, որոնք ապահովում են երեխայի նորմալ զարգացման ինչպես նյութական, այնպես էլ ոչ նյութական պայմանները, ինչպես նաև երեխաների նորմալ կենսագոյատևումը: Նշված հասարակական հարաբերություններն օրենսդիրը չի առանձնացնում որպես քրեաիրավական պաշտպանության կարևորագույն օբյեկտ, հետևաբար, ընդգրկված չեն քրեական օրենսդրության հիմնական խնդիրների ցանկում, ուստի, կարծում ենք, համապատասխան լրացման անհրաժեշտությունը ակնհայտ է: Ասվածը հիմնավորվում է անչափահասներին բնորոշ առանձնահատուկ հատկանիշներով, որոնք պայմանավորված են տարիքով, սոցիալական և հոգեբանական անհասությամբ, վիկտիմության բարձր աստիճանով և ինչպես ամրագրված է Երեխայի իրավունքների մասին Կոնվենցիայում պետք է գտնվի պետության պաշտպանության և հովանո ներքո:
3. Հաշվի առնելով, որ «դաստիարակություն» և «խնամք» հասկացությունների սահմանումն առ այսօր չունի օրենսդրական ամրագրում, ուստի կարևորվում է այդ հասկացությունների մեկնաբանումը, առավելևս, որ դրանք հաճախ նույնականացվում են: Մեր կարծիքով, «դաստիարակությունը» կայանում է հետևյալում.

- առողջության, ֆիզիկական, հոգեկան, հոգևոր և բարոյական զարգացման ապահովումը: Առաջնահերթ անչափահասի առողջության ապահովումն է, որը նրա լիարժեք և բազմակողմանի զարգացման կարևորագույն նախադրյալ է հանդիսանում, քանի որ ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի առողջության պահպանման իրավունք: Առողջապահության բոլոր հաստատություններում մինչև 18 տարեկան երեխաները բժշկական օգնություն ստանում են անվճար հիմունքներով: Երեխայի առողջ աճը ապահովելու նպատակով ծնողները և այն անձինք, ում վրա դրված է երեխային դաստիարակելու պարտականությունը, պարտավոր են նրան ապահովել սննդով, բարենպաստ պայմաններ ստեղծել կենցաղի և հանգստի համար:

- դաստիարակության բաղկացուցիչ մասն է կազմում կրթությունը: ՀՀ Սահմանադրության 38 հոդվածը սահմանում է կրթություն ստանալու իրավունքը, միաժամանակ ամրագրում է հիմնական ընդհանուր կրթության պարտադիր լինելը: Ավելին, ՀՀ ընտանեկան օրենսգիրքի 51-րդ հոդվածի 2-րդ մասը ուղղակիորեն սահմանում է այն որպես իմպերատիվ պահանջ, մասնավորապես՝ ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների կրթության մասին:Երեխաների դաստիարակությանն ու կրթությանը վերաբերող բոլոր հարցերը ծնողները լուծում են փոխադարձ համաձայնությամբ՝ ելնելով երեխաների շահերից և հաշվի առնելով տասը տարին լրացած երեխայի կարծիքը: «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը սահմանում է ՀՀ-ում հիմնական ընդհանուր կրթության պարտադիր լինելը: Դպրոցական տարիքի երեխային ուսումնական հաստատություն ընդգրկելու համար պատասխանատու է ծնողը՝ օրենքով սահմանված կարգով: Բացի այդ,

նույն օրենքի 28-րդ հոդվածը սահմանում է ծնողի պարտականությունը երեխայի ուսման գործընթացի կազմակերպման գործընթացում:

Հատկանշական է, որ ինստիտուցիոնալ առումով ամրագրված չէ նաև «խնամք» եզրույթի մեկնաբանությունը: Կարծում ենք, այն իր մեջ ներառում է կենցաղային առաջնային կարիքների բավարարում, մասնավորապես՝ երեխայի կեցությանն անհրաժեշտ նվազագույն պայմանների ապահովումը սննդով, հագուստով, հանգստի և ժամանցի կազմակերպումը, նախադպրոցական ուսումնական գործընթացի կազմակերպում և այլն:

Նշենք, որ երեխայի խնամք հասկացության վերաբերյալ դրույթ առկա է «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետում, այն է՝ երեխայի խնամք են համարվում սաների օրվա ռեժիմի, սննդի, անձնական հիգիենայի, անվտանգության, երեխայի ինքնասպասարկման և սոցիալ-կենցաղային սպասարկման ապահովման համալիր միջոցառումները:

Այսպիսով, որ խնամք և դաստիարակություն եզրույթները իրենց հերթին մեկնաբանվում են հետևյալ կերպ. խնամքը ենթադրում է երեխայի առաջնային կարիքների բավարարում, դաստիարակությունը՝ սոցիալապես ընդունելի ինքնուրույն և ինքնաբավ կյանքի նախապատրաստում, որը ներառում է առողջության, ֆիզիկական, հոգեկան, հոգևոր և բարոյական զարգացման, կրթության իրավունքի ապահովումը: Սակայն գրականության մեջ հաճախ կարելի է հանդիպել խնամք բառի (care)՝ լայն իմաստով գործածության, որը ենթադրում է թե՛ մեկը, թե՛ մյուսը: Այսպիսով, առաջարկվում է ՀՀ ընտանեկան օրենսգրքի 41-րդ հոդվածը համալրել 3-րդ մասով, նախատեսելով դաստիարակության և խնամք եզրույթների սահմանումները, մասնավորապես՝ առաջարկվում է ՀՀ ընտանեկան օրենսգրքի 41-րդ հոդվածը համալրել 3-րդ մասով, նախատեսելով դաստիարակության և խնամք եզրույթների սահմանումները, մասնավորապես՝

- «դաստիարակությունը»՝ սոցիալապես ընդունելի ինքնուրույն և ինքնաբավ կյանքի նախապատրաստում, որը ներառում է առողջության, ֆիզիկական, հոգեկան, հոգևոր և բարոյական զարգացման, կրթության իրավունքի ապահովումը:
- «խնամքը»՝ երեխայի առաջնային կարիքների բավարարում, այդ թվում՝ երեխայի կեցությանն անհրաժեշտ նվազագույն պայմանների ապահովումը սննդով, հագուստով, հանգստի և ժամանցի կազմակերպումը, նախադպրոցական ուսումնական գործընթացի կազմակերպումը:

4. Հարկ է նշել նաև այն, որ հատկապես մեծ է այն արարքների վտանգավորության աստիճանը, որոնք ուղղված են անօգնական վիճակում գտնվող երեխաների դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելուն կամ ոչ պատշաճ կատարելուն: Դրանց թվին պատկանում են այն անձիք, ովքեր ունեն հոգեկան տկարամտություն կամ հոգեկան խանգարումներ, ինչի արդյունքում վերջիններս օբյեկտիվորեն զրկված են ճիշտ ընկալելու իրենց հետ կատարվածը ինչպես նաև 12 տարեկանը չլրացած անձինք: Այս հանգամանքները նպատակահարմար ենք գտնում ևս հաշվի առնել որպես տվյալ հանցակազմը որակավորող դարձնող հատկանիշ: Անդրադառնալով «անօգնական վիճակ» հասկացությանը, պետք է նկատել, որ միանշանակ բանաձև սահմանել հնարավոր չէ, քանի որ տվյալ դեպքում այն ենթադրում է կախվածություն, որը կարող է լինել նյութական և ոչ նյութական, իսկ անօգնական վիճակը կարող է պայմանավորված լինել ինչպես տուժողի տարիքով, այնպես էլ հոգեկան հիվանդությամբ, ֆիզիկական, հոգեբանական կամ հոգեֆիզիոլոգիական հանգամանք-ներով: Որպես անօգնական վիճակ պետք է դիտարկել յուրաքանչյուր իրավիճակ, որի պարագայում ենթադրյալ բռնության ենթարկված երեխան զրկված է իր իրավաչափ շահերն ինքնուրույն պաշտպանելու հնարավորությունից: Բացի այդ, Մարդու

իրավունքների Եվրոպական կոնվեցիայի 2-րդ հոդվածով նախատեսված՝ կյանքի իրավունքի երաշխավորման՝ պետության պոզիտիվ պարտականության պատշաճ կատարման հրամայականից ելնելով, ընտանիքում բռնության ենթարկված անձի կյանքին կամ առողջությանը սպառնացող իրական և անմիջական վտանգի առկայության յուրաքանչյուր դեպքում վերջինիս վիճակը գնահատել որպես անօգնական: Հետևաբար, առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգրքի 247-րդ հոդվածը համալրել համապատասխան որակյալ հատկանիշով:

5. Գործող օրենսգրքով կատարված փոփոխություններով փորձ է արվել բարձրացնել ՀՀ քրեական օրենսգրքի 247-րդ հոդվածի կիրառելիությունը, այն համալրելով վերը նշված հանրորեն վտանգավոր հետևանքների նախատեսմամբ, սակայն տվյալ դեպքում, կարծում ենք, այն դեռևս թերի է այն պատճառաբանությամբ, որ երեխայի առողջության վատթարացման մեկնաբանությունը գործնականում մի շարք խնդիրներ կարող է առաջացնել, քանի որ այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ: Նշենք, որ երեխայի ֆիզիկական կամ հոգեկան առողջության վատթարացումը հարաբերական է և անհատական, ելնելով երեխայի ֆիզիկական և առողջական առանձնահատկություններից, դժվար կլինի սահմանել ֆիզիկական կամ հոգեկան առողջության վատթարացման առկայությունը: Ուստի, գտնում ենք, որ ՀՀ քրեական օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասում առկա «երեխայի ֆիզիկական կամ հոգեկան առողջության վատթարացումը» ձևակերպումն անհրաժեշտ է փոխարինել «որն առաջացրել է երեխայի առողջության թեթև վնասի պատճառում» ձևակերպմամբ:
6. Քրեական օրենքն երբեմն սահմանափակում է այն անձանց շրջանակը, որոնք կարող են քրեական պատասխանատվության ենթարկվել սուբյեկտի առանձնահատուկ, որոշակի հատկանիշների մատնանշմամբ: ՀՀ քրեական օրենսգրքի 247-րդ հոդվածով նախատեսված հանցագործության սուբյեկտը հատուկ է, սակայն այդ ցանկում ընդգրկված չեն այն անձիք, ովքեր ժամանակավորապես իրականացնում են երեխաների փաստացի դաստիարակությունն ու խնամքը, խոսքը մեծապես վերաբերվում է տատիկներին ու պապիկներին, ավագ քույրերին ու եղբայրներին, ծնողների քույրերին ու եղբայրներին, որոնք առանց խնամակալության ձևակերպման և անկախ այն հանգամանքից, որ վերջիններիս վրա օրենսդրական մակարդակով երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը դրված չեն: Ընտանեկան իրավունքի գիտությունում նման անձանց դասում են փաստացի դաստիարակողների շարքին: Ամփոփելով վերոշա-րադրյալը, առաջարկում ենք երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտա-կանությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու սուբյեկտների ցանկը ընդլայնել, ամրագրելով փաստացի դաստիարակողին և խնամողին որպես քննարկվող հանցակազմի սուբյեկտ:
7. Բարդություններ կարող են առաջանալ նաև երեխայի դաստիարակությունն ու խնամքը հանձնելով խնամատար ընտանիքի հանձնելու դեպքերում, ավելին՝ օրենսդիր մարմինը վերջինիս օժտում է ծնողի պարտականություններով, միաժամանակ նախատեսելով կենսաբանական ծնողի մասնակցությունը երեխայի դաստիարակության գործընթացին: Կարծում ենք, խնամատար ծնողի կողմից խնամատարության պայմանագրով, որով սահմանվում են երեխայի խնամքի, դաստիարակության և կրթության պայմանները, կողմերի իրավունքներն ու պարտականությունը, ինչպես նաև այդ պայմանագրի ժամկետի երկարաձգման, դադարման հիմքերն ու հետևանքները, ստանձնած երեխային դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ

կատարելու դեպում քննարկվող հոդվածով քրեական պատասխանատվության է ենթակա խնամատար ծնողը:

8. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 30-րդ կետում լրացում կատարել և շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ օրինական ներկայացուցիչ՝ անչափահաս, անգործունակ կամ հոգեկան առողջության խնդիր ունեցող մեղադրյալի, տուժողի կամ վկայի ծնողը, որդեգրողը, խնամակալը կամ հոգաբարձուն, փաստացի խնամք իրականացնող անձը, իր իրավասության սահմաններում՝ խնամակալության և հոգաբարձության մարմնի աշխատակիցը, մահացած մեղադրյալի կամ ենթադրյալ հանցանք կատարած և մահացած անձի մերձավոր ազգականը, ինչպես նաև տուժող կամ գույքային պատասխանող իրավաբանական անձի ղեկավարը:
9. ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 18-րդ կետում կատարել փոփոխություններ, այն շարադրելով հետևյալ բովանդակությամբ՝ մերձավոր ազգական՝ անկախ համատեղ բնակության հանգամանքից՝ ամուսինը, նախկին ամուսինը, ծնողը, այդ թվում՝ խորթ ծնողը, որդեգրող ծնողը, խնամատար ծնողը, երեխան (այդ թվում՝ որդեգրված, խորթ, հոգեզավակ), եղբայրը, քույրը (այդ թվում՝ խորթ), պապը, տատը, թոռը, որդեգրող ծնողի կամ խնամատար ծնողի ամուսինը կամ նախկին ամուսինը, ամուսնու կամ նախկին ամուսնու ծնողը, ինչպես նաև ամուսնու կամ նախկին ամուսնու ծնողի համար՝ փեսան կամ հարսը, ինչպես նաև համատեղ բնակվող փաստացի խնամք իրականացնող անձը: Ամուսին կամ նախկին ամուսին է համարվում նաև փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող կամ գտնված անձը: Միաժամանակ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 84-րդ հոդվածը համալրել 4-րդ կետով, նախատեսելով երեխայի փաստացի խնամող անձի հասկացությունը, դրանում ներառելով այն անձանց շրջանակը, ովքեր երեխայի խնամքն ու դաստրակաությունը օրենքի ուժով չեն իրականացրել:
10. Կատարված հետազոտությունների և ուսումնասիրությունների, ինչպես նաև անձնական ծառայողական գործունեության արդյունքների հիման վրա հայտնաբերվել են մի շարք բացթողումներ և թերություններ, որոնց շտկումն օրենսդրական մակարդակի վրա թույլ կտա ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի 247-րդ հոդվածի ու Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 178-րդ հոդվածի կիրառելիությունը: Մասնավորապես՝ առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգրքի 247-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ:
11. Քննարկվող հանցագործությունն ունի լատենտայնության բարձր մակարդակ, ինչը պայմանավորված է նրանով, որ տուժածներն անչափահասներ են, որոնք կա՛մ չեն գիտակցում իրենց նկատմամբ կատարված գործողությունների հանցավոր բնույթը, կա՛մ իրենք իսկ շահագրգիռ են, որպեսզի չբացահայտվեն համապատասխան դեպքերը:
12. Քննարկվող հանցագործության վտանգավորությունը պահանջում է ոչ միայն այդ հանցագործությունների ժամանակին հայտնաբերումն ու բացահայտումը, այլ նաև կանխարգելումը: Դրանց հայտնաբերումն ու կանխարգելումը ենթադրում են մի շարք սոցիալական խնդիրների լուծում, մասնավորապես, այնպիսի պայմանների ստեղծում, որոնք ուղղված կլինեն մարդու իրավունքների և ազատությունների, մարդու արժանավայել կյանքի ու ազատ զարգացման, ընտանիքի պետական աջակցության, անչափահասների կենսական նշանակություն ունեցող շահերի իրավական պաշտպանության ապահովմանը: Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի խնդիրների լուծումը սկսում է համայնքից՝ խնամակալության և հոգաբարձության մարմիններից ու դրանց կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներից: Սակայն ինչ վերաբերվում է երեխայի նկատմամբ կատարվող ոտնձգություններին, մասնավորապես՝ երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ

կատարելու դեպքերի հայտնաբերմանն ու կանխարգելմանը, ապա պետք է փաստել, որ այս գործառույթը հիմնականում իրականացնում է ՀՀ ՆԳՆ ոստիկանությունը: Կարծում ենք, որ ներկայումս անհրաժեշտություն է առաջացել նոր ընթացակարգեր և մեխանիզմներ մշակելու, իսկ գործող ընթացակարգերում՝ համապատասխան փոփոխություններ կատարելու, քանի որ հանցագործություններից տուժած անչափահասների իրավունքների և շահերի արդյունավետ պաշտպանության լավագույն միջոցը՝ նրանց հայտնաբերումն ու այդ հանցագործությունների կանխարգելումն է:

13. Ուսումնասիրելով ձևավորված պրակտիկան, հանգում ենք այն եզրահանգման, որ երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու և առհասարակ անչափահասների դեմ ուղղված հանցագործությունների վաղ հայտնաբերման հարցում կարևոր դեր է հատկացվում ինչպես միջգերատեսչական, այնպես էլ հասարակական համագործակցությանը: Կասկածից վեր է, որ կարևոր նախապայմաններից է «ոստիկանություն-խնամակալության և հոգաբարձության մարմին-սոցիալական պաշտպանության հաստատություններ-կացարան տրամադրող կազմակերպություններ-ՀՀ մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի Երեխաների և սոցիալական պաշտպանության վարչություն-հանրակրթական ուսումնական հաստատություններ-նախադպրոցական ուսումնական հաստատություններ» համագործակցության մեխանիզմների վերամշակումը:
14. Առաջարկվում է մշակել աշխատանքային մեխանիզմներ, որոնք թույլ կտան օպերատիվ կերպով հայտնաբերել երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերը, մշտական մշտադիտարկում անցկացնել համայնքում, ինչպես նաև արագ և ժամանակին արձագանքել նմանատիպ դեպքերին, հետագա մշտադիտարկման իրականացման նպատակով: Գործնականում բացառություն չեն կազմում այն դեպքերը, երբ ընտանիքում երեխայի կյանքին և առողջությանը սպառնացող վտանգը կարող է թելադրել ոստիկանության ծառայողին անհապաղ երեխային ընտանիքից հեռացնել մինչև խնամակալության և հոգաբարձության մարմնին այդ մասին իրազեկելը: Համաձայն ՀՀ Կառավարության 04.04.2024թ-ի թիվ 479-Ն որոշման 4-րդ կետի՝ ոստիկանությունը երեխայի նկատմամբ բռնության մասին տեղեկության փաստը ստանալուց հետո անհապաղ, բայց ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում արձանագրում է երեխայի նկատմամբ բռնության փաստը և կազմակերպում նրա ուղղորդումը՝ աջակցություն ստանալու նպատակով: Արձանագրենք, որ ուղղորդումն իր մեջ չի ներգրավում երեխային աջակցության կենտրոն տեղափոխելու որոշումը, ինչը համայնքի սոցիալական աշխատողի բացառիկ լիազորությունն է, հետևաբար, տվյալ պարագայում ոստիկանության ծառայողների լիազորությունը սահմանափակվում է ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված երեխայի տեղափոխմամբ: Մասնավորապես, առաջարկվում է ՀՀ ընտանեկան օրենսգրքի 58-րդ հոդվածում և «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան ու կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածում կատարել փոփոխություններ:
15. Հանրակրթական և այլ ուսումնական հաստատությունների վարչակազմի հետ մշտական համագործակցությունը, որը թույլ կտա հայտնաբերել այն դեպքերը, երբ ծնողների թույլ հսկողության, իրենց վրա օրենքով դրված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով, երեխայի ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված կրթություն ստանալու իրավունքը չի իրագործվում: Առաջարկվում է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածում լրացում կատարել, սահմանելով մանկավարժի պարտականությունը ծնողի կամ այլ օրինական ներկայացուցչի կողմից երեխայի

կրթություն ստանալու իրավունքի իրացման խոչընդոտելու դեպքում, գրավոր իրազեկել դպրոցի ղեկավարությանը, որն էլ իր հերթին պարտավոր է ստացված տեղեկատվությունը փոխանցել ԽՀՀ և տարածքային ոստիկանության բաժին:

16. Սպասարկվող վարչական տարածքում գործող բժշկական հաստատությունների վարչակազմի հետ մշտական համագործակցությունը, որի նպատակն է տեղեկություններ ստանալ երեխաների նկատմամբ չարաշահումների, մասնավորապես՝ նրանց դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերի բացահայտման նպատակով: Խոսքը մեծապես վերաբերվում է անչափահասի առողջության ապահովմանը, ինչը երեխայի լիարժեք և բազմակողմանի զարգացման կարևորագույն նախադրյալ է հանդիսանում: Երեխայի առողջ աճը ապահովելու նպատակով ծնողները և այն անձինք, ում վրա դրված է երեխային դաստիարակելու և խնամելու պարտականությունը, պարտավոր են նրան ապահովել սննդով, բարենպաստ պայմաններ ստեղծել կենցաղի և հանգստի համար:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԵՆ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԵՏԵՎՅԱԼ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ

1. Մելիքսեթյան Մ. Անչափահասը և սեռական բռնությունը, «Արդարադատություն» ամսագիր, Մարտ 1 (12),2011, էջեր 34-40:
2. Մելիքսեթյան Մ., Քրեական պատասխանատվությունը երեխային դաստիարակելու պարտականությունը չկատարելու համար, «Արդարադատություն» ամսագիր, Դեկտեմբեր 4 (23),2013, էջեր 29-35:
3. Մելիքսեթյան Մ., Երեխային դաստիարակելու պարտականությունը չկատարելու քրեական և վարչական պատասխանատվության առանձնահատկությունները, «Արդարադատություն» ամսագիր, 4 (45), 2018, էջեր 41-50:
4. Մելիքսեթյան Մ., Երեխային դաստիարակելու պարտականությունը չկատարելու կանխարգելման միջոցները, «Դատական իշխանություն» ամսագիր, 4/225-226, 2018, էջեր 40-45:
5. Մելիքսեթյան Մ., Ոստիկանության լիազորությունները երեխայի իրավունքների պաշտպանության բնագավառում «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի շրջանակներում, «Օրենքի պատվար, N 7, մարտ, 2019, էջեր 57-68:
6. Մելիքսեթյան Մ., Ընտանիքում բռնության դեպքերի քրեաբանական մասնակի վերլուծությունն ու դրա հիման վրա առաջարկությունների մշակումը, «Արդարադատություն» ամսագիր, 3 (52), 2020, էջեր 49-53:
7. Մելիքսեթյան Մ., Բռնության ենթարկված երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում ՀՀ ոստիկանության անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման ստորաբաժանումների և խնամակալության և հոգաբարձության մարմինների համագործակցության կատարելագործման ուղիները, «Դատական իշխանություն» ամսագիր, Հունվար-մարտ 1-3/283-285, 2023, էջեր 68-75:

Меликсетян Марта Эдуардовна

УГОЛОВНО-ПРАВОВЫЕ И КРИМИНОЛОГИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ НЕИСПОЛНЕНИЯ ИЛИ НЕНАДЛЕЖАЩЕГО ИСПОЛНЕНИЯ ОБЯЗАННОСТИ ПО ВОСПИТАНИЮ ИЛИ УХОДУ ЗА РЕБЕНКОМ

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Создание предпосылок для реализации права ребенка воспитываться в семье является одной из основных задач государства постольку, поскольку надлежащее воспитание и уход, полученные в семье, является одной из гарантий реализации прав ребенка и его развития. Институт уголовно-правовой охраны семьи и прав ребенка закреплен в законодательствах многих стран мира. За невыполнение или ненадлежащее выполнение обязанности по воспитанию или уходу за ребенком предусмотрена уголовная ответственность по ст. 247 нового УК РА. В ходе изучения причин и условий, способствующих совершению преступления, предусмотренного ст. 247 УК РА, а также существующих механизмов по предупреждению данного вида преступления, были выявлено отсутствие четких механизмов межведомственного сотрудничества.

Следует отметить, что преступления в отношении несовершеннолетних зачастую совершают члены семьи или же лица, на которых возложена обязанность по воспитанию и уходу за ребенком. Защита прав и интересов ребенка, изучение мероприятий, осуществляемых в целях защиты детей от преступных посягательств, жестокого обращения со стороны членов семьи, требует комплексного обсуждения и анализа регулирующих данную сферу правовых актов. Несовершенство законодательной регламентации неисполнения или ненадлежащего исполнения обязанности по воспитанию или уходу за ребенком, отсутствие основных показателей эффективности применения норм в сфере защиты прав и интересов ребенка от семейного и бытового насилия, нулевая статистика применения ст. 247 УК РА и отсутствие обвинительных приговоров по указанной статье, подтверждают необходимость глубокого теоретического исследования и выработки научно-обоснованных рекомендаций, призванных разрешить указанные проблемы.

Цель и задачи исследования. Актуальность работы обусловила ее цель, сформулированную следующим образом: уголовно-правовое и криминологическое изучение состава преступления, предусмотренного ст. 247 УК РА, формирование предложений по совершенствованию профилактических мер по предупреждению указанного преступления на основании системного изучения уголовно-правовых и криминологических аспектов. Целью исследования были обусловлены научно-практические задачи, в частности: анализ особенностей физического, психологического и социального развития ребенка в качестве объекта уголовно-правовой охраны, изучение и анализ объективных и субъективных признаков состава преступления, предусмотренного ст. 247 УК РА, на основании таковых формирование предложений по совершенствованию норм, способствующих правоприменению нормы, предусматривающей уголовную ответственность за неисполнение или ненадлежащее

исполнение обязанности по воспитанию или уходу за ребенком, изучение зарубежного законодательства, предусматривающую уголовную ответственность за указанное преступление, а также изучение мер по предупреждению неисполнения или ненадлежащее исполнения обязанности по воспитанию или уходу за ребенком и формирование соответствующих предложений по совершенствованию таковых.

Научная новизна исследования заключается в том, что впервые в Республике Армения изучаются и анализируются особенности и проблемы уголовной ответственности за неисполнение или ненадлежащее исполнение обязанности по воспитанию или уходу за ребенком.

Теоретическая значимость исследования определяется тем, что предложенные автором основные положения и выводы могут в определенной степени восполнить пробелы в действующем законодательстве по защите прав и интересов ребенка от преступных посягательств со стороны членов семьи или лиц, на которых возложена обязанность воспитания или ухода за ребенком. Результаты исследования могут стать теоретической базой для дальнейших научных работ.

Практическая значимость заключается в том, что представленные в ней выводы могут быть использованы в процессе научной, правоприменительной и учебно-методической работы. Результаты исследования также могут быть применены в практической деятельности правоохранительных органов, а также в качестве повышения квалификации сотрудников правоохранительных органов, в учебном процессе студентов и магистеров.

Структура работы. Работа состоит из введения, трех глав, заключения и списка литературы. **Во Введении** представлено обоснование актуальности проблемы исследования, сформулирована научная новизна, указаны объект и предмет диссертационной работы, определяются цели, задачи и методология исследования, дан обзор научно-критической литературы, представлена теоретическая и практическая значимость работы. В **первой главе** диссертационной работы представлена уголовно-правовая характеристика неисполнения или ненадлежащего исполнения обязанности по воспитанию или уходу за ребенком, том числе анализ объективных и субъективных признаков преступления, предусмотренного ст. 247 УК РА. Во **второй главе** исследования представлены особенности уголовной ответственности за неисполнение или ненадлежащее исполнение обязанности по воспитанию или уходу за ребенком по законодательству ряда зарубежных стран, а также меры совершенствования практического применения ст.247 УК РА. **В третьей главе** проанализированы причины и условия неисполнения или ненадлежащего исполнения обязанности по воспитанию или уходу за ребенком, а также меры предупреждения совершения данного деяния, представлены соответствующие предложения по совершенствованию законодательства, регулирующего сферу исполнения родителями, а также лицами, на которых возложена обязанность по воспитанию и уходу за ребенком, своих обязанностей. В **Заключении** работы представлен ряд выводов и предложений, которые составляют основу проведенного исследования.

MARTA MELIKSETYAN

CRIMINAL-LEGAL AND CRIMINOLOGICAL ISSUES OF FAILURE OR IMPROPER FULFILLMENT OF DUTIES FOR RAISING OR CARING FOR A CHILD

SUMMARY

Relevance of the Study. Ensuring the necessary conditions for the realization of a child's right to be raised in a family is a fundamental responsibility of the state. A stable family environment plays a crucial role in a child's upbringing and well-being, serving as a key guarantee for the protection of their rights and overall development. Recognizing this, many legal systems worldwide have established provisions within criminal law to safeguard both the family institution and the rights of the child.

Both Article 247 of the new Criminal Code and Article 170 of the defunct Criminal Code of the Republic of Armenia provide for criminal liability for failure or improper fulfillment of duties for raising or caring for a child. However, it should be noted that neither Article 170 of the defunct Criminal Code, nor Article 247 of the current Criminal Code have resulted in any convictions.

Furthermore, an examination of the causes and conditions contributing to the commission of offenses under Article 247 of the RA Criminal Code, as well as the existing crime prevention mechanisms, revealed a lack of clear inter-agency cooperation mechanisms.

It is noteworthy that offences against minors are often committed by family members or individuals entrusted with the upbringing and care of the child. The protection of children's rights and interests, as well as the study of measures aimed at safeguarding them from criminal offences and cruel treatment by family members, require a comprehensive discussion and analysis of the legal instruments governing this area. The shortcomings in the legislative regulation of failure or improper fulfillment of duties for raising or caring for a child, the lack of fundamental indicators to assess the effectiveness of legal norms in protecting children's rights and interests from family and domestic violence, the absence of statistical data on the application of Article 247 of the Criminal Code of the Republic of Armenia, and the lack of convictions under this article underscore the need for in-depth theoretical research and the development of scientifically grounded recommendations to address these issues.

Aim and Objectives of the Research. The significance of this study defines its primary aim: to conduct a criminal-legal and criminological analysis of the corpus delicti of the offense outlined in Article 247 of the Criminal Code of the Republic of Armenia. This research seeks to develop proposals for enhancing preventive measures aimed at combating this offense, based on a systematic examination of its criminal-legal and criminological dimensions. The aim of the research is shaped by both scientific and practical objectives, including: analyzing the specific aspects of a child's physical, psychological, and social development as an object of criminal-legal protection; examining the objective and subjective characteristics of the corpus delicti of the offense under Article 247 of the RA Criminal Code;

and, based on these findings, formulating proposals to enhance legal provisions ensuring the effective enforcement of criminal liability failure or improper fulfillment of duties for raising or caring for a child.

The **scientific novelty** of this research lies in the fact that, for the first time in the Republic of Armenia, the features and challenges of criminal liability for failure or improper fulfillment of duties for raising or caring for a child are systematically studied and analyzed.

The **theoretical importance** of the study is determined by the potential of its key findings and conclusions to address gaps in the existing legislation concerning the protection of children's rights and interests from criminal offenses committed by family members or individuals responsible for their upbringing and care.

The **practical application** of the research is evident in its relevance to scientific, law enforcement, and educational activities. Furthermore, the research findings can be utilized in the operational work of law enforcement agencies and in the professional development and advanced training of law enforcement officers.

Structure of the Research. The thesis consists of an introduction, three chapters, a conclusion, and a list of references. The **introduction** outlines the relevance of the research problem, formulates the scientific novelty, defines the object and subject of the study, and sets out the research aims, objectives, and methodology. It also provides a review of scientific and critical literature and highlights the theoretical and practical significance of the study. The **first chapter** presents a criminal-legal characterization of the failure or improper fulfillment of duties for raising or caring for a child. It includes an analysis of the objective and subjective elements of the offense as defined in Article 247 of the Criminal Code of the Republic of Armenia. The **second chapter** examines the specifics of criminal liability for failure or improper fulfillment of duties for raising or caring for a child under the legislation of various foreign countries. It also proposes measures for improving the practical application of Article 247 of the RA Criminal Code. The **third chapter** analyzes the causes and conditions contributing to the failure or improper fulfillment of duties for raising or caring for a child. It also examines preventive measures aimed at reducing the occurrence of such offenses and presents relevant proposals for improving the legislation governing the responsibilities of parents and other individuals entrusted with a child's upbringing and care. The **conclusion** summarizes the key findings and proposals derived from the research, forming the foundation of the study's contributions.